# ԱՍՏՎԱԾ ԿԱՐՈՂ Է ՔԵԶ ԷԼ ԳՈՐԾԱԾԵԼ

Դադարի՛ր վախենալուց
Մաս 6
Ղուկաս 1:26-55

*«Եվ վեցերորդ ամսումը Գաբրիէլ հրեշտակն Աստվածանից ուղարկվեց Գալիլեայի մի քաղաք, որի անունը Նազարեթ էր, մի կույսի մոտ, որ նշանված էր մի մարդի, որի անունը Հովսեփ էր... և այն կույսի անունը Մարիամ էր:»* Համար 26-27

Մարիամի առաջին ռեակցիան

*«Եվ նա նրան տեսնելով շփոթվեցավ նրա խոսքի համար, և իր մտքումը մտածում էր, թե ինչպիսի բան պիտի լինի այս ողջույնը: Եվ հրեշտակը ասեց նրան. Մի վախենար, Մարիամ. որովհետև Աստվածանից շնորհք գտար:»* Համար 29-30

Հնարավոր վախերը՝

- Քննադատության վախը - «Ի՞նչ կմտածեն ուրիշները»
- Գերբնականի վախը - «Ի՞նչ պիտի պատահի»
- Անհամապատասխանության վախը - «Ինչպե՞ս պիտի հաղթահարեմ այս»
- Փոփոխության վախը - «Ինչպե՞ս կփոխի սա իմ կյանքը»

## Ինչե՞պես կարող է Աստված քեզ գործածել հակառակ քո վախերին

### 1- Զարգացրու Աստծո ներկայության գիտակցությունը

*«Եվ հրեշտակը նրա մոտ գալով ասեց. Ողջույն քեզ, ով շնորհընկալ. Տէրը քեզ հետ. օրհնյալ ես դու կանանց մեջ:»* Համար 28

*«Մի վախենար, Մարիամ. որովհետև Աստվածանից շնորհք գտար:»* Համար 30

Մարիամի պատասխանը

*«Իսկ Մարիամն այս բոլոր բաները պահում էր, և իր սրտումը մտածում էր:»* Ղուկաս 2:19

### 2- Նվիրվիր Աստծո ծրագրին

Աստծո ծրագիրը: Համար 31-33

Մարիամի պատասխանը

*«Մարիամն էլ ասեց. Ահա Տիրոջ աղախինն եմ. թող քո խոսքի պես լինի ինձ:»* Համար 38

### 3- Ուրախացիր Աստծո զորությամբ

*«Եվ Մարիամն ասեց հրեշտակին. Սա ինչպե՞ս կլինի. ըստ որում ես այր չգիտեմ: Հրեշտակը պատասխանեց և ասեց նրան. Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը քեզ վրա կհովանավորի... Որովհետև Աստծո առաջին ոչ մի բան անկարելի չէ:»* Համար 34-35, 37

Մարիամի պատասխանը

*«Եվ Մարիամը ասեց. թող իմ անձը փառավորի Տիրոջը և իմ հոգին ուրախացավ իմ Փրկիչ Աստուծովը...որովհետև Հզորը մեծամեծ բաներ արավ ինձ...»* Համար 46-47,49

### 4- Հենվիր Աստծո խոստումների վրա

*«Իր Իսրայել ծառային օգնեց իր ողորմությունը հիշելով:»* Համար 54

Մարիամի պատասխանը

*«Երանի նրան, որ հավատաց, թե այն բաները կկատարվեն, որ Տերիցն իրան ասված են:»* Համար 45

Հաջորդ Քարոզի Թեման
ԻՆՉՊԵ՞Ս ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ԱՊԱԳԱՆ
Դադարի՛ր վախենալուց
Հովիվ Սարո Խաչիկեան